

Հայտարարություն ապահովված հիփոթեքային պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ

2020 թվականի մայիսի 26-ին «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ-ն հրապարակային առաջարկի միջոցով նախատեսում է տեղաբաշխել անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր՝ հետևյալ պայմաններով.

ԴԱՍԸ	Անվանական արժեկտրոնային	
ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ	Հիփոթեքային վարկեր	
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	100,000 ՀՀ դրամ	100 ԱՄՆ դոլար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ	100,000,000 ՀՀ դրամ	800,000 ԱՄՆ դոլար
ՔԱՆԱԿԸ	1,000 հատ	8,000 հատ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ	10,5 %	6,4%
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	36 ամիս	
ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	կիսամյակային	
ՏԵՂԱԲԱՇԽՈՂԸ	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՁԵՒ	«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգ, ստանդարտ փակ աճուրդ	

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ դրամային և դոլարային պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2020թ. ապրիլի 22-ի թիվ 1/16ԾՕՀ-Ա որոշմամբ:

Ազդագիրը հրապարակվել «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ ինտերնետային կայքում՝ հետևյալ [հղմամբ](#):

Ներդրողները ազդագրի տպագիր տարբերակը կարող են ձեռք բերել «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 10, # 122):

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (Բորսա) տեղաբաշխման համակարգով՝ աճուրդի եղանակով:

Աճուրդին ուղղակիորեն մասնակցություն կարող են ունենալ միայն Բորսայի անդամները, որոնց ցանկը ներկայացված է Բորսայի պաշտոնական կայքում՝ www.amx.am:

Բորսայի անդամ չհանդիսացող ներդրողները աճուրդին կարող են մասնակցել
Բորսայի անդամների միջոցով՝ սահմանված կարգի և պայմանների համաձայն: